ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

14 նոյեմբերի 2024 թվականի N 468Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏԻ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 05-Ի N 78-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տարածքային կառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով և հիմք ընդունելով «Սյունիքի մարզային նյարդահոգեբուժական դիսպանսեր» փակ բաժնետիրական ընկերության տնօրենի 2024 թվականի նոյեմբերի 11-ի թիվ 858 գրությունը՝

որոշում եմ.

Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզպետի 2024 թվականի մարտի 05-ի՝ «Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզային ենթակայության հարյուր տոկոս պետությանը սեփականության իրավունքով պատկանող բաժնեմաս ունեցող առողջապահական փակ բաժնետիրական ընկերությունների 2024 թվականին բնակչությանը վճարովի սկզբունքով տրամադրվող հիվանդանոցային, արտահիվանդանոցային օգնության և սպասարկման տեսակներն ու սակագները հաստատելու մասին» N 78-Ա որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունը՝ որոշման N 6 հավելվածը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն հավելվածի:

2024-11-15 12:27:46 GMT+4
Վավերացված է ԷԿԵՆԳ-ի կողմից

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ **Ռ.ՂՈՒԿԱՍՅԱՆ**

2024թ. նոյեմբերի 14